

**ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հիմնադրությախն փաստաթղթի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (այսուհետ փորձաքննություն) իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Փորձաքննությունը, համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին.>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի, իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական:
3. Փորձաքննության նախնական և հիմնական փուլերում, համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի, պայմանագրային հիմունքներով կարող է ներգրավվել համապատասխան ոլորտի իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող փորձագետ, որի կողմից կազմվում և փորձաքննական կենտրոն է ներկայացվում մասնագիտական եզրակացություն:
4. Հիմնադրությախն փաստաթղթերի փորձաքննության դեպքում գործընթացին ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որի կողմից տրվում է եզրակացություն կամ կարծիք:
5. Փորձաքննության նախնական փուլում 10 աշխատանքային օրվա, իսկ հիմնական փուլում՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերում նախատեսված մարմիններից հիմնադրությախն փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիք, եզրակացություն չստանալու դեպքում դրանք համարվում են դրական: Մինչև ժամկետի լրանալը ուշացման վերաբերյալ ներկայացված պատճառաբանությունը լիազոր մարմնի կողմից հիմնավոր համարվելու դեպքում, սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարածզել ոչ ավել, քան հինգ աշխատանքային օրով: Ժամկետի երկարածզման կամ մերժման մասին լիազոր մարմինը սահմանված կարգով տեղեկացնում է ներկայացրած մարմնին՝ պատճառաբանության ստացման օրվանից ոչ ուշ, քան երրորդ օրը: Հիմնադրությախն փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ երկարածզված ժամկետում, իսկ ժամկետի երկարածզումը մերժելու դեպքում նախատեսված ժամկետում կարծիք, եզրակացություն չստանալու դեպքում դրանք համարվում են դրական:
6. Փորձաքննության նախնական փուլում փորձաքննության է ենթարկվում ձեռնարկողի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Ձեռնարկողի կողմից փորձաքննության է ներկայացվում փաստաթղթի թղթային և էլեկտրոնային տարրերակները:
7. Ձեռնարկողի նախաձեռնությամբ քաղաքաշինական ոլորտի հիմնադրությախն փաստաթղթերի նախնական գնահատման հայտի փորձաքննությունը և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքի համաձայնեցման գործընթացները կարող են համատեղվել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների ապահովման պայմանով:

8. Փորձաքննության հիմնական փուլում փորձաքննության է ենթարկվում ձեռնարկողի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Ձեռնարկողի կողմից փորձաքննության է ներկայացվում փաստաթղթի թղթային և էլեկտրոնային տարրերակները:

9. Ընդերքօգտագործման բնագավառի համապատասխան փաստաթղթերը ձեռնարկողը փորձաքննության է ներկայացնում ոլորտի լիազոր մարմնի միջոցով:

II. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ Ա,Բ,Գ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՅՏԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Ձեռնարկողը, որը մտադիր է իրականացնել Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված հիմնադրույթային փաստաթուղթ կամ նախատեսվող գործունեություն, գրավոր դիմում է լիազոր մարմին, ներկայացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը՝ համապատասխան փաստաթղթերով: Երկօրյա ժամկետում լիազոր մարմինը, սահմանված կարգով, համապատասխան ընթացք տալու հանձնարարականով հայտը և համապատասխան փաստաթղթերը տրամադրում է Փորձաքննական կենտրոնին:

11. Հայտի լրակազմ չլինելու և (կամ) դրանում պարունակվող տեղեկատվության մեջ անձշտությունների առկայության դեպքում, Փորձաքննական կենտրոնը՝ լիազոր մարմնի հանձնարարությամբ, Օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, հայտի ստացման օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում հայտը վերադարձնում է ձեռնարկողին՝ լրակազմելու և (կամ) անձշտությունները վերացնելու համար: Հայտը վերադարձնելու պահից նախնական փուլի ժամկետը համարվում է դադարեցված՝ մինչև ձեռնարկողի լրակազմած հայտը փորձաքննական կենտրոն ներկայացնելու պահը:

12. Նախնական փորձաքննության արդյունքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված որոշման կայացման դեպքում 30-աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը կամ լիազոր մարմնի հանձնարարությամբ Փորձաքննական կենտրոնը ձեռնարկողին է տրամադրում հիմնադրության փաստաթղթի դրույթի կամ նախատեսվող գործունեության անթույլատրելիության վերաբերյալ գրություն՝ համապատասխան հիմնավորումներով:

13. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշման կայացման դեպքում 30 – աշխատանքային օրվա ընթացքում հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հայտը՝ համապատասխան հիմնավորումներով վերադարձվում է ձեռնարկողին՝ լրակազմման:

14. Լրակազմ հայտը ստանալուց հետո յոթօրյա ժամկետում՝ Փորձաքննական կենտրոնն այն տեղադրում է իր էլեկտրոնային կայքում և այդ մասին տեղեկացնում է հիմնադրույթային փաստաթղթի դեպքում՝ մարզպետին, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին և տվյալ ազդակիր վարչական շրջանի դեկանատին, իսկ նախատեսվող գործունեության դեպքում՝ ազդակիր համայնքի դեկանատին (այսուհետ՝ քննարկումների պատասխանատու), համատեղ հանրային ծանուցում և քննարկումներ կազմակերպելու նպատակով:

15. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված որոշման կայացման դեպքում 30 – աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկողին տեղեկացվում է, որ հիմնադրութային փաստաթուղթը կամ նախատեսվող գործունեությունը ենթակա է անդրսահմանային համատեքստում ազդեցության գնահատման: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների համաձայն:
16. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով սահմանված որոշման կայացման դեպքում՝ հիմնադրույթային փաստաթուղթի և Ա, Բ կատեգորիաների գործունեության տեսակների համար, համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 30 – աշխատանքային օրվա ընթացքում Փորձաքննական կենտրոնը կազմում և ձեռնարկողին է տրամադրում տեխնիկական առաջադրանք՝ լիազոր մարմնի կողմից սահմանված ձևով:
17. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով սահմանված որոշման կայացման դեպքում 30 – աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոնը կազմում և լիազոր մարմնի հաստատումից հետո ձեռնարկողին է տրամադրում փորձաքննական եզրակացություն:
18. Հիմնադրույթային փաստաթուղթի և Ա, Բ կատեգորիայի գործունեության տեսակների վերաբերյալ լրակազմման վերադարձնելու որոշում կայացնելու դեպքում լրամշակված հայտը ձեռնարկողի կողմից Փորձաքննական կենտրոն ներկայացվելուց հետո, համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ մասի 4-րդ կետի, Փորձաքննական կենտրոնը 30-աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկողին է տրամադրում տեխնիկական առաջադրանք:
19. ♀ կատեգորիայի գործունեության տեսակների վերաբերյալ լրակազմման վերադարձնելու որոշում կայացնելու դեպքում լրամշակված հայտը ձեռնարկողի կողմից Փորձաքննական կենտրոն ներկայացնելուց հետո, համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, Փորձաքննական կենտրոնը 30-աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկողին է տրամադրում փորձաքննական եզրակացություն:

**ՓՈՐՉԱՔՆՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ
ՆԱԽԱՏԵՍՎՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ Ա,Բ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՓՈՐՉԱՔՆՍՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

20. Փորձաքննության հիմնական փուլում Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմված հաշվետվությունը՝ կից փաստաթուղթերով, ձեռնարկողը ներկայացնում է Փորձաքննական կենտրոն:
21. Փորձաքննական կենտրոնը հաշվետվությունների և կից փաստաթուղթերի վերաբերյալ կարծիքները, եզրակացությունները ստանալուց հետո դիմում է քննարկումների պատասխանատուին՝ հանրային ծանուցում և քննարկումներ կազմակերպելու համար:
22. Փորձաքննական կենտրոնը հաշվետվությունը՝ կից փաստաթուղթերով ստանալուց հետո՝ 20-աշխատանքային օրվանից ոչ շուտ /կարծիքներ, եզրակացություններ, առաջարկություններ ստանալուց հետո/ իրականացնում է հանրային ծանուցում, իսկ ծանուցումից յոթ աշխատանքային օրվանից ոչ շուտ քննարկումների պատասխանատուի հետ՝ ձեռնարկողի՝ աջակցությամբ, իրականացնում է հանրային քննարկում:

23. Հաշվետվությունների վերաբերյալ կարծիքները, եզրակացությունները, հանրային քննարկման արձանագրությունները և հանրության հիմնավորված դիտողությունները և առաջարկությունները ստանալուց հետո Փորձաքննական կենտրոնը, համաձայն Օրենքի 20-րդ հոդվածի կազմում է փորձաքննական եզրակացության նախագիծ:
24. Հիմնադրույթային փաստաթղթի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում, 60-աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում, 40-աշխատանքային օրվա ընթացքում Փորձաքննական կենտրոնը կազմում և լիազոր մարմնի հաստատումից հետո ձեռնարկողին է տրամադրում պետական փորձաքննական եզրակացություն:
25. Փորձաքննական կենտրոնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել՝ հիմնադրույթային փաստաթղթի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում մինչև 30-աշխատանքային օր, իսկ Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում մինչև 20-աշխատանքային օր, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ, գրավոր՝ համապատասխան հիմնավորումներով, այդ մասին տեղեկացնելով ձեռնարկողին:
26. Սույն կարգի 25-րդ կետի համաձայն ներկայացված դիտողություններին ձեռնարկողի կողմից բավարար պատասխաններ չտրվելու դեպքում, Փորձաքննական կենտրոնը զրավոր տեղեկացնում է ձեռնարկողին՝ նշելով հայտնաբերված անհամապատասխանությունները, թերացումները, սխալները, դրանք վերացնելու համար տրամադրվում է մինչև 10 աշխատանքային օր:
27. Սույն կարգի 26-րդ կետում սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը և լրամշակումները Ձեռնարկողի կողմից Փորձաքննական կենտրոն չներկայացնելու կամ թերություններով, ոչ լիարժեք ներկայացնելու դեպքում Ձեռնարկողին տրվում է, լիազոր մարմնի կողմից հաստատված, բացասական եզրակացություն:
28. Ձեռնարկողի կողմից համապատասխան փաստաթղթերը՝ սույն կարգի 25-րդ, 26-րդ կետերով սահմանված ժամկետներում, լրակազմ ներկայացնելու դեպքում լիազոր մարմնի կողմից հաստատված եզրակացությունը Փորձաքննական կենտրոնը տրամադրում է ձեռնարկողին: Եզրակացությունը յոթ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում: